ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

(2024-2025 ուստարի)

Ողջո՛ւյն, սիրելի՛ մասնակից
Հայ գրականության օլիմպիադան նվիրվում է Ծմակուտի քուրմի՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 90-ամյակին, և քանի որ տարին հայտարարվել է Մաթևոսյանական, դու էլ սրբազան աղոթքով խնկարկի՛ր նրա անմահությանը։

«Գրականություն պետք է մտնել պատասխաններով։ Պատասխաններով»։
Հրանտ Մաթևոսյան

9-րդ դասարան

1. Ի՞նչ գիտես Հրանտ Մաթևոսյանի մասին։ Ի՞նչ շրջասույթով են բնութագրում նրան։ Պատմի՛ր «Կանաչ դաշտը» պատմվածքի մասին (համառոտ)։ Ներկայացրո՛ւ կանաչ դաշտը՝ իբրև կենդանի կերպար՝ նախքան տագնապով լցվելը ու դրանից հետո։

10 մ.

2. Ի՞նչ գիտես Ներսես Շնորհալու մասին։ Ի՞նչ պատվանուններով են մեծարել նրան։ Գրական ի՞նչ նոր ժանր է բերել գրականություն։ Թվարկի՛ր Շնորհալու ստեղծագործություններից և ներկայացրո՛ւ դրացից որևէ մեկը։

10 մ.

3. Ո՞ր դարերում է ստեղծվել հայրենը։ Ո՞վ է այն առաջին անգամ օգտագործել։ Ի՞նչ է նշանակում հայրեն, ի՞նչ կառուցվածք ունի այն։ Ի՞նչ թեմատիկա ունեն հայրենները։ Ո՞ր հեղինակի հայրեններին ես ծանոթ (Շնորհալի, Ֆրիկ, Երզնկացի, Քուչակ). գրի՛ր սիրային և խրատական թեմաներով մեկական հայրեն և վերլուծի՛ր։

10 մ.

4. Ո՞վ է Սայաթ- Նովան։ Ի՞նչ գիտես նրա մասին։ Որտե՞ղ է ամփոփված նրա մարմինը։ Ովքե՞ր են սայաթնովվյան ամենամյա Վարդատոնի հեղինակ-հիմնադիրները։ Ի՞նչ է պատգամել հանճարեղ սիրերգակը։ Ի՞նչ պատվանուններով է մեծարվում նա։

10 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան